**01.04.26 - 01.04.26**
12:00
**Անցանց**
Գրանցումը բաց է
☑

[Պահպանել Google օրացույցում](#)
ԵՊՀ ֆիզիկայի ինստիտուտ, 406 սենյակ

**Ս.թ. ապրիլի 1-ին՝ ժամը 12:00-ին, ԵՊՀ ֆիզիկայի ինստիտուտի 406 սենյակում** կանցկացվի «Գիտական հոդված գրելու մեթոդաբանություն. գաղափարից մինչև հրապարակում» թեմայով սեմինարը՝ նախատեսված բնագիտական ուղղվածությամբ հետազոտողների համար:

Այն նպատակ ունի աջակցելու ուսանողներին հեղինակավոր ամսագրերում գիտահետազոտական հոդվածներ տպագրելու հարցում:

Զեկուցման ընթացքում կներկայացվի գիտական հոդվածի պատրաստման ամբողջական գործընթացը՝ գաղափարից մինչև հրապարակում: Կքննարկվեն հետազոտական թեմայի ընտրության սկզբունքները, նպատակների ու խնդիրների ձևակերպումը, գրականության համակարգված ուսումնասիրությունը և հետազոտության մեթոդաբանության մշակումը: Կներկայացվեն նաև հոդվածի կառուցվածքի, խմբագրման և գիտական ամսագրերում հրապարակման վերաբերյալ ուղեցույցներ, որոնք կապահովեն բարձր որակի և միջազգային չափանիշներին համապատասխան գիտական աշխատանքի ամփոփումը և ներկայացումը:

Սեմինարը կվարի ԵՊՀ կենսաբանության ֆակուլտետի կենսաքիմիայի, մանրէաբանության և կենսատեխնոլոգիայի ամբիոն դոցենտ Լիլիթ Գաբրիելյանը:

Գրանցման հղումը՝ [այստեղ:](#)

Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1
(+37460) 710000
info@ysu.am